# Պարույր Սևակ

## Գարնանային

I

Ծավալվել ես, գարո՛ւն, ողջ աշխարհի վրա,
Բացել ես ինքդ քեզ, բացվել ինքդ քո դեմ՝
Նման մի խոր երգի - անհղացում գրված -
Որ միշտ նո՛ր է թվում, թեպետ անգիր գիտեն:
Քո պարգևած պայծառ ու խոր խլրտումից
Հողը հիմա ծա՛նր՝ գոլորշով է շնչում,
Գետերն են դուրս ելել իրենց նախկին հունից,
Մինչդեռ թռչունները՝ հին բներն են թռչում:
Բացել են ծառերը իրենց թերթերն ի լույս,
Կանաչներն են ծփում անսահման ու անծիր,
Եվ քո տաքուկ շնչից, քո ներշնչած սիրուց
Աղբյուրներն են երգում նման քա՛ղցր լացի:
Ծավալվել ես այսպես ողջ աշխարհի վրա
Բացե՛լ ես ինքդ քեզ, բացվել ինքդ քո դեմ,
Նման այն խոր երգին - անհղացում գրված,
Որ ինձ նո՛ր է թվում, թեպետ անգիր գիտեմ...

II

Սաղարթների վրա ծիծառներ կան հիմա,
Գարնան շունչ կա հիմա, բուրմունք անուշ.
Ծաղիկներն են լռում, իբրև մի խոր իմաստ,

Որ զուլալ աղբյուրն է լոկ թարգմանում:
Ու արոտներում խլրտում կա հիմա,
Փողոցներում խայտանք ու եռուզեռ...
Տարբեր հուզանք ունի հիմա ամե՞ն մի մարդ,
Բայց միևնույն պահն է ողջը հուզել:
Վարարումով վայրի սիրտս լի՞ք է հիմա,
Սիրտս լի՞ք է հիմա, լի՞՝ լալու չա՞փ...
Եվ պահում է լեզուս մի անթարգման իմաստ
Իր խո՞ր, հուզումնավո՛ր լռության տակ...
III
Փողոցների վրա քո խայտանքն է կախվել,
Լռ՞ւռ տարածվել ամեն մայթի վրա,
Փակ պատուհանները քո տաք շնչին բախվել,
Երկփեղկվել են, գարո՛ւն, սրտի՞ս նման:
Այնպես քա՞ղցր է զգալ թևածումդ, գարո՛ւն,
Այնպես քա՞ղցր է ապրել հուզանքդ պերճ,
Որ խայտում է իմ մեջ իբրև բոսոր արյուն,
Շարժվում սրտիս խորքում, երակիս մեջ:
Ես ուրա՞խ եմ, գարուն, ուրա՛խ՝ խնդալո՞ւ չափ,
Բայց սրտիս մեջ ցավ կա՝ լուռ լացի՞ պես...
Բախվել է քո շնչին պատուհանը իմ փակ
Ու երկփեղկվել, գարո՛ւն, իմ սրտի՞ պես...
IV
Գարո՛ւն, նույնն ես նորից, նո՛ւյնն է խայտանքդ անուշ.-
Նորից զգում եմ ես ծանրությունը սրտիս...
Դու հուզում ես, գարո՛ւն, իբրև ծանոթ անուն,
Որ մոռացվել մի պահ, արդ հիշվում է կրկին:
Բա՛ց է սիրտս հիմա, գարո՛ւն, քո շնչի դեմ.
Ե՞կ, ողողի՛ր սիրտս քո խնդությամբ պայծառ,
Ե՞կ, մոտեցի՞ր, որ քեզ մոտի՞կ զգամ, դիտեմ

Իբրև մեռած ընկեր՝ կրկին կենդանացած...
Այնպես ծա՜նր է հիմա առանց նրա ապրել,
Գարո՛ւն, քո խայտանքը այն աշխարհի վրա,
Որի գարնան համար նա իր կյանքը դրեց՝
Իբրև մի երգ սիրո - կարմիր արյամբ գրված...
Նո՛ւյնն ես նորից, գարո՛ւն, նո՜ւյնն է խայտանքդ անուշ.-
Նորից զգում եմ ես ծանրությունը սրտիս...
Դու հուզում ես, գարո՛ւն, իբրև ծանոթ անուն,
Որ արցունք է կորզում՝ երբ հիշվում է կրկին...
V
Բայց այսուհետ կգաս, գարո՛ւն, ո՛չ այն հերթով,
Որով եկել ես դու ձիգ դարերից...
-Այսուհետև կգաս իբրև ո՛չ լոկ գարթոնք,
Այլև իբրև չեղած մի տարելից:
Կգա՜ս, կգա՜ս իբրև փառաբանում ու փառք
Նրա՛նց համար, որոնք դյուցազնորեն,
Ներկա կյանքով հարուստ և գալիքով հպարտ,
Նահատակվե՜լ են, մեռե՛լ, բայց չեն կորել:
Նրանց համար, որոնք ձմռան ցրտերի մեջ
Գիտեին, որ գարո՛ւն, նորից կգաս,
Որ չի կարող կյանքում լինել հավերժ ձմեռ
Եվ մահվան դեմ կյանքը՝ թույլ ու տկար:
Նրանց համար, որոնք գիտեին, որ կգաս
Եվ սփռելով կյանքում փայլ ու ժպիտ,
Կլինես նրանց գործած հերոսության վկա
Եվ կորստի համար, վերքի համար՝ սպի:
Կգա՛ս, բայց ոչ իբրև լոկ բնության զարթոնք,
Ինչպես որ եկել ես ձիգ դարերից,
Այլ թշնամուն՝ զենքով, մահին մահով հաղթող
Հերոսների համար մի տարելից...

Կգաս, բայց ոչ իբրև լոկ նորաբաց կակաչ,
Ո՛չ իբրև վարդ, շուշան, «սիրի-սիրի».-
Իբրև փառաբանում, հիշատակում կգաս,
Իբրև Հաղթության Տոն,
Մայիսի ինն...

15.I.1947թ.
Երևան